

գեղութեան լուրեր չեն, որ գալիս են այնտեղից, այժմ միայն կոտորածի ձայներ են հասնում մեզ, Երկու ամիս է արդէն, որ ամենայն օր հեռազիրը կոտորածների լուրեր է բերում, սեպտեմբերի 18-ին մեծ արեան նախճիր է գործուել Կ. Պոլսում, սեպտեմբերի 31-ին Տրավիզոնում անխտիր կոտորել են հայ ողամարդկանց, Տրավիզոնից մինչև Մարաշ մի արեան հեղեղաս է կազմուել, այրել են Տրավիզոնի հայ գեղերը և բնակիչներին սրի անցկացրել՝ կոտորել են Բաբերդի հայերին, մեծ արիւն հեղութիւն է պատահել Երզրումում հոկտ. 18: որի մանրամասնութիւնները աննկարազելի են: Սասունի կոտորածից ազատած հայերն անխուսափելի մահուան են մատնուած, ողորմութեան կարկառած ձեռներին արգելուած է օգնել այդ խեղճերին, Սոսկալի են նոյնպէս Իթիթիսի, Դիարբեքերի և Սվաղի կոտորածները: Հայ քրիստոնէութիւնը բնաջնջն լինելու վրայ է, Ամենակալ Տէրը միայն կարող է փրկել մեր ու եկեղեցին այդ փորձանքներից, ուրեմն ամեն մի հայ քրիստոնէի պարտըն է ի սրտ աղջոմել և վերին [Տեսչութեան գթութիւնն հայցել, «Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէնդ ես նեղելոց, հաս օգնութիւն ծառայից քոց, լեր օգնական ազգիս Հայոց»:

Այս սարօսափելի կոտորածների մասին ժամէ ի ժամ սպասումէ Ս. Էջմիածնում ամենապատիւ Տէր Պատրիարքի ղեկուցումն:



ՊԵՇՏՈՆԱԿԱՆՆՔ:

ՔԱՂՅՈՒԾԻՑԻ Ի ԿՈՆԴՈՒԿՈՅ ՎԵՀՈՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ:

Կոնդակ շրջարերական յանուն Հայազգի գաղթականութեան Ռումանիոյ Պուլկարիոյ և այլ տեղեաց. Հմբւ. 718: որով ընդ Հայրապետական օրհնութեանց և պատուիրաց ճանուցանի նոցա զկարգումն Մկրտիչ վարդապետի Տէրունեան ի պաշտօն այցելու հովուի և քարոզչի այնց կողմանց:

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն Տիկին մարդարտի Խաչատրեան Բագուեցոյ, Համբւ. 750: սակա շինելոյ նորա խաչէալ մի սեղանոյ վանուց Ս. Ստեփանոսի Սաղիանու, ըստ յայտարարութեան թեմակալին Շամախույ Գեր. Մակար եպիսկոպոսի Բարիսուգարեանց:

Կոնդակ յանուն Հայ Գալթականաց Միացեալ նահանգաց Ամերիկայի, Հմբւ. 766: վասն կարենից ջանից և նպաստից յօգուտ սովելոցն Սասնոյ:

Կոնդակ շրջարերական յանուն առաջնոր-

դաց և կառավարչաց վիճակացն Ռուսաստանի, վասուն վերադարձուցանելոյ ի գանձապահաց Մայր Աթոռոյ որ ի վիճակու զին մատեանս գանձանակաց Մ. Աթոռոյ և ստանալոյ վնորս:

Կոնդակ յանուն ս. Սինօդի ս. Էջմիածնի, Հմբւ. 872: վասն փոխադրութեան Եղիշէ վարդապետի Մուրատեան ի փոխանորդութեանէ Գորուայ ի Կարս: և վասն կարգելոյ գեղեղամ վարդապետն Բաբաջանեան ի վանահայրութիւն վանիցն Մողնոյ ս. Գէորգայ ի տեղի Եղիա վարդապետի Հ. Զաւլեան:

Կոնդակ յանուն անդամոյ վանական կառավարութեան Մ. Աթոռոյ Թագեռու վարդապետի Առիւծեան, Հմբւ. 873: որով շնորհի նմա իրաւունս կրելոյ զսկ ծաղկեայ փիլոն:

Կոնդակ յանուն անդամոյ վանական կառավարութեան Մ. Աթոռոյ Գևոնդ վարդապետի Յուղակիմեան, Հմբւ. 874: որով կարգի Ժամօրհնող Մ. Տաճարի ս. Էջմիածնի, ի տեղի ծերունազարդ Յովհաննէս հպիսկոպոսի Տաթևացւոյ:

Կոնդակ յանուն Եղիշէ վարդապետի Մուրատեան: Հմբւ. 876: որով շնորհի նմա լանջախաչ վարդապետական ականակուռ:

Կոնդակ առ նոյն Եղիշէ վարդապետ Մուրատեան) Համբւ. 877: որով փոխադրի ի պաշտամանէ Փոխանորդութեան վիճակին Գորուայ և հաստատի փոխանորդ վիճակին Կարուց:

Ա եհափառ այրապետի հրամանով խնդրատուներից մինչև հրկտեմիերի 17-ը ուսուցչաց ընդհանուր ցուցակի մէջ մուծուած են հետեւալները:

- | Կարգ. | |
|-----------------------------|-----|
| 1. Կաւասարգեան Խրարիոն | ԺԲ. |
| 2. Մելիք Այվազեան Շուշանիկ | ԺԳ. |
| 3. Տէր Դաւթեան Ովսաննա | ԺԲ. |
| 4. Տ. Յովհաննիսեան Արպառէ | ԺԲ. |
| 5. Օռբարեանց Արդիս | Գ. |
| 6. Ապրեսեան Օաքարիս | Գ. |
| 7. Միրատեան Տիգրան | Ե. |
| 8. Ապեհանց Խարայէլ | Ե. |
| 9. Շահազարգեան Աշտան | Ե. |
| 10. Բագալեան Մարկոս | Ե. |
| 11. Ալբանդեան Արմենակ | Ե. |
| 12. Օքրոքվերցիեան Եղիսարելթ | ԺԲ. |
| 13. Կարապետեան Միքատ | Գ. |
| 14. Զմշկեան Արսենիկ | ԺԳ. |

15. Բայազեան Մարիամ
16. Վարդապետեան Սարգիս
17. Համեանց Գևորգ
18. Շաթիրեան Խաչատուր

ԺԴ.

Ուղէս դասագիրք եկեղեցական՝ Օխական ուսումնարաններում գործածելու համար՝ ընդունուած է

ԸՆ. Քիշմիշեանցի՝

Նախագիտելիք բուսաբանութեան.

Ուղէս օժանդակ դաս ուսուցչաց և աշակերտաց համար:

ԶՆ. Գրիգորեանցի՝ Պ. Պ. Պ.:

ՊԱՏՃԵՆ.

ՊԿՏՏԵ ՌԱՌԱՑ ԵԽՈՒՄՍԻ ՔՐԻՍՏՈՍՈՒ ԵՒ ԱՆԱՍԱՆՆԵԼԻ ԿԱՄՈՔՆ ԱՍՏՈՒԹՈՅ ԵՊՈՒԿՈՊՈՍՊՂԵՏ ԵԻ ԿԱԹՈՒԴՎԱԿՈՍ ԱՄԵՆԱՅԵՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՑ ՊԱՏՐՈՒՄՔ ՀԱՄԱՀԳԱԿԱՆ ՆԱԽԾՄԵԾԱՐ ԱԹՈՈՒԹ ԱՐԱՐԱՏԵԵՐՆ ԵՊԵՔԵԼԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄՐԲՈՑ ԿԱԹՈՒԴԻԿ ԷԶՄԻԱԾՆԻ.

Միաբանի Մայր Աթոռոյս Գիրապատիւ Տ. Սուքիս Արքեպիսկոպոսի Պարզեանց Հայրապետական օրհնութեամբ ծանուցանեմք:

Տիւուչ Գէորգեան Հոգեւոր Ջեմարանի պարոն Կարապետ կոստանեանց յանցելումն ամի հրամանաւ Մերով կազմեալ էր ըստ օրինակի Յանձնաժողովոց կարգելց ի Հոգելոյս Նախորդաց Մերոց Հայրապետացն ամենայն Հայոց Տ. Գէորգայ և Տ. Մակարայ զիւսումնարանական վարչական Յանձնաժողով և զամփի լցուցեալ զպէտա ընթացիկ գործոց եկեղեցական-ծխական ուսումնարանաց մերոց իբրու ի փորձոյ հաւաստեալ յայտարարութեամբ ի 6 այսր Հոկտեմբերի Համարաւ 185 ծանուցանէ Մեղ զհետապայ թերութեանց և Հայցէ զպատշաճաւորն տնօրինութիւն: Նախ՝ կանոնադրութիւն եկեղեցական ծխական ուսումնարանաց հաստատեալ ի Նախորդէն Մերմէ անթերի չգործադրի ի ձեռն հաս ուսումնարանական վարչութեանց: Երկրորդ՝ ծրագիր ուսմանց վաւերացեալ ի Տայրագոյն Հոգեւոր իշխանութենէ մնայ առանց պատշաճաւորն գործադրութեան: Երրորդ՝ կոչին ի պաշտօն ուսուցիչք և վարժուհիք, որոց անուանք չեն մուծեալ ի ցուցակ և չգործադրին կոպարք թոշակաց նոցին ըստ սահմանելոյն: Չորրորդ՝ զասագիրք և այլ մատեանք վերծանութեան

ի կիր արկանին առանց նախընթաց հաւանաթեան Մերոց: Հինգերորդ՝ ի տեղիս տեղիս ի պատճառս թերութեանց հրահանգաց, որ ի պէտս թեմական տեսչաց, յայտնին անախորժ և անտեղի գմտութիւնք ի պաշտօնեայս: Վեցերորդ՝ անորոշ են սահմանք յարաբերութեան Աւումնարանական վարչական Յանձնաժողովոյ ընդ այլոց հաստատութեանց:

Յօրէ անտի ամբառնալոյ Մեր շնորհօք Ամենասուրբ Հոգելոյն Աստուծոյ յԱթօռ. Հայրապետութեան ամենայն Հայոց զփորին ուշադրութիւն Մեր դարձուցեալ եմք ընդ անվթար պահպանութիւն կարգաց և կանոնաց սահմանելոց յերջանիկ նախորդաց Մերոց վասըն բարեկարգութեան համանգամայն աղջային Աստուծածահամոյ հաստատութեանց, ի մասնաւորի ուսումնարանաց, և փափագիմք՝ զի և յայսմհեակ անփոփոխ շարունակեացի ակնածութիւն ի պաշտօնեայս կրթութեան համազգի մանկանց: Յայս սակս արժան վարկաք այսու Հայրապետական կոնդակաւ Մերով կարգել զիերապատուութիւն Զեր նախագահ Աւումնարանական վարչական Յանձնաժողովոյ և յանդամակցութիւն նորին զիեսուչն Հոգեւոր ծեմարանի Մայր Աթոռոյս զգարձն կարապետն կաստանեանց և զուսուցիչն Շեմարանի զիարեցնորհ վարդապետան կարապետ, Եղնիկ և Յուսիկ՝ և զգարծնայսն՝ Յովհաննիսեանց և զԱտիփանուն կահայեանց, և պատուիրեմք փութալ յառաջ վարել զգործս Աւումնարանական Վարչութեան Մերոց, առաջնորդ ունելով հանապաղ զհրահանգս ըստ հետելումն:

Առաջին՝ Յանձնաժողովոյդ լիցի գործ հսկել, զի անվթար պահպանեացին ամենայն կանոնք և հրահանգք տուեալք ի Տայրագոյն Հոգեւոր իշխանութենէ և մի ներեսցի փոփութեան ինչ առանց Մերոց նախընթաց հաւանութեան ըստ այսմ և պարտ է զմա այլաջութեամբ հսկել, զի յամենայն վիճակս Հայոց Ռուսաստանի Առաջնորդք, թեմական Տեսուչք, Հոգարաճութիւնք և ուսուցիչք միօրինակարար անթերի ի կիր արկցեն զկանոնադրութիւն եկեղեցական ծխական ուսումնարանաց, զծրագիրսն ուսմանց նոցին և զկոպարսն թոշակաց. դասագիրք աւանդելի լեզուաց և առարկայից ըստ հաճոյս մի փոփոխեացին, նաև օժանդակ զբեանք ընթերցանութեան աշակերտելոցն լիցին ինաւով մեծաւ ընտրեալ և յատկացեալ ի զմանէ, և առաջաց ցուցակին վաւերացելոց ի Պէնջ մի կոչեացին ի պաշտօն ուսուցիչք և վարժուհիք:

Երկրորդ՝ Յանձնաժողովոյդ են պարտիք չան ի գործ արկաննել վախճան գնելոյ անտեղի գժառութեանց և ընդհարմանց պաշտօնէից գաստիարակութեան համազգի մանկանց յանձնիւր շրջանակս պարտաւորութեանց նոցին և եթե գոն ինչ թերութիւնք ի հրահանգս կանոնաց թեմական տեսչաց, նախընթաց զիտութեամբ Առաջնորդաց սահմանեացին որոշ կանոնք գործողութեանց իրաւանց և պարտուց նոցին և առաջարկեացին ի վաւերացումն Մեր:

Երրորդ՝ պարտ ի վերայ Յանձնաժողովոյդ գնի ի միտ առնուլ զամենայն պէտս ծիսական եկեղեցական ուսումնարանաց Մերոց և փոյթ ունել մեծապէս հայթայթելոյ հնարս առապահովութիւն վիճակի համայն արժանաւոր գաստիարակաց և առ բարդաւաճումն ուսումնական և բարոյական յառաջադիմութեան եկեղեցական ուսումնարանացն ըստ արդի պահանջից մանկավարժութեան, և զօր ինչ ունիցի յայսմ մասին անօրիննել Յանձնաժողովից պարբերաբար զեկուցանել ի զիտութիւնն Մեր և ի բարենկաաւորութիւն:

Եւ չորրորդ՝ որ ինչ առ յարաբերութիւնը Յանձնաժողովոյդ ընդ այլոց հաստատութեանց, պատուիրեմբ գմին զամենայն խընդիրս առաջարկեալս ի քննութիւն և ի տնօրինութիւն Յանձնաժողովոյդ մատադիւր իքնին առեալ արձանագրել ի կանոնաւոր գումարման ժողովոյ անդամոցդ և յետ կազմելոյ և առաջի առնելոյ զօրագրութիւնս նորին ի հաստատութիւն Մեր՝ անօրիննել զօր ինչ արժանն է մի միայն ընդ ձեռն թեմական առաջնորդաց, ընդ որս և եղիցի հանապազ պաշտօնական հաղորդակցութիւն դորին յամենայն ի խնդիրս Ուսումնարանական վարչութեան:

Մաղթելով ի զլուխ Զեր և գործակցացդ զօրհնութիւն Յիսուսի երկնաւոր ինամողին մանկանց՝ յարդիւնաւորել ի Զեզ զգեղեցիկ ակնկալութիւն Մեր, Ֆամամբ յաւեւս աղօթարար վասն սիրեցեալ ազդիս Մերոյ և յառաջադիմութեան նորին և Զեր՝

ՄԿՐՏԻՉ

ԿԱԹՈՒԳՆԻԱԾ ԵՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Ի 17 Հոկտեմբերի 1895 ամի
և յազգային թուականութեանս ՌՅԵՆԾ.

Ի Հայրապետութեան Մերում յթ. ամի
յԱրարատան Մայր Աթոռ Ս. ՀՀմիածնի

ի Վաղարշապատ.

Համար 798.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐՈՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ.

1. Քաջակերեցարուց ես եմ...	Կ. Վ.	559
2. Ազօթքը Ցըտութեան փարատ. Թարգմ.	Պատրիկ.	570
3. Քրիստոնէական մարտարապետութեան սկզբը	Թարկէն.	574
4. Ենեզօթական Ջըրոնիան		576
5. Եկեղեցական մամուլը		581

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԱՏՄԱԿԱՆ.

6. Բանաստեղծութիւն	8. Ցովաննիկեան	585
7. Սասանեան Ցէրութեան պատմութիւն Թ. Խօսկէթէ . . .	Թարգմ. Ն. Ք.	585
8. Մոլուկ Կաղանկատուացոյ աղուանից . . .	պատմութիւն (Եպոնակելի) Խաչիկ Վ.	588

ՅԱՆԱԿՈՒՐԱԿԱՆ — ՄԱԿԱԿԱՎԱՐԱԿԱՆ.

9. Մատենախօսութիւն	Կ. Վ.	590
10. Պրոֆ. Փետտէրի Իրատարակ.	Կ. Վ.	592
11. Հաւասարակցութիւն մարմնական և նոգեկան աշխատ. Թարգմ. Գ. Ս.		594
12. Ժողովրդական Գրւանըն.	Ն. Ք.	596
13. Հայ Գասպարը	Ս. Հայկունի	597
15. ՄԱՄՐԱՋՈՒԹ		561

ԱԶԴԱՑԻՆ.

14. Դպրոցական Վարչութիւն		404
Ենծանքն ասասանանաց		402
ՄԱՅՐ ԱԹՈՌ.		
Հեռագիրներ		
1. ՈՐՈՌԱՎԱՅԹ		
Երեսափ թեմ		
5. ՏԱԺԿԱՎԱՅԹ		

ՊԱՇՏՈՆԱԿԱՆԻՑ.

ԲՈՎԱՆԴԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԵԱԽԵՂՈՒԱԺ ԱՐԱՐԱՑԻ
ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ.
ԵԱՅՑԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՅԱԽԵԼՈՒԾ ԱՐԱՐԱՑԻ 1895 Թ.

ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՐԱՐԱՑԻ ԱՄԾԻ.

ԹՈՒՊԱ ԿՈՐՆԹԱՑՈՑՆ ԱՌ ՊՕՎԱՍ.

Սուեփաննոս և որք ընդ նմա երիցունքն, Դափնոս և Քսենովն, առ Պողոս եղայր ողջոյն, Աբբոմանք Բ. Եկին ի Կորնթոս, Սիմօն անուն և Կղեւերոս, որք կործանեցին քաջ քաջ զոմանց հաւատըս, Հրապուրող և ապականել բանիւք. յորոց բանից վերա դու ինքնին պարտիս հասանել, Զի